ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները Ուսումնամեթոդական վարչությունը ֆեկուլտետների հետ համատեղ կազմակերպել է համաձայն «**Երևանի պետական համալսարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման կարգ**»-ի, հարցաշարի և ժամանակացույցի (առաջին կիսամյակի հարցումներն իրականացվել են փետրվարի 7-ից մինչև 22-ը՝ առկա ուսուցմամբ սովորողների և մարտի 10-ից մինչև 25-ը՝ հեռակա ուսուցմամբ սովորողների համար, իսկ երկրորդ կիսամյակի հարցումները՝ հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 7-ը՝ առկա և հեռակա ուսուցմամբ սովորողների համար)։ Թե՛ առկա, թե՛ հեռակա ուսուցման համակարգերում հարցումներն իրականացվել են առցանց եղանակով, համալսարանական էլեկտրոնային հասցեների միջոցով։

Հարցման արդյունքների օբյեկտիվ պատկեր ստանալու համար կարևոր է ուսանողների մասնակցությունը։ 2022-2023 ուստարվա I կիսամյակի հարցումներին մասնակցել են մասնաճյուղի՝ առկա ուսուցման **634** ուսանողից **411-ը** (ուսանողական հիմնական համակազմի 64.83 %-ը), հեռակա ուսուցման **491** ուսանողից **169-ը** (ուսանողական հիմնական համակազմի 34.63 %-ը)։ II կիսամյակի հարցումներին մասնակցել են առկա ուսուցման **505** ուսանողից **220-ը** (ուսանողական հիմնական համակազմի 43.56 %-ը), հեռակա ուսուցման **402** ուսանողից **71-ը** (ուսանողական հիմնական համակազմի 17.66 %-ը)։ Երկրորդ կիսամյակի մասնակիցների նվազումը պայմանավորված է հարցման ժամանակացույցով (համընկնում է ուսանողների արձակուրդային ժամանակաշրջանին)։

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2022-2023 ուստարվա ուսանողական հարցումների վերլուծությունը մեր կողմից կատարվել է 3 տարիների համեմատությամբ։

Հարցաշարի առաջին երկու հարցերը, որոնք վերաբերում են կոռուպցիոն երևույթներին, մասնաճյուղում տոկոս չեն կազմում։

Հարցաշարի երրորդ հարցը վերաբերում է կրթական ծրագրի ղեկավարների աշխատանքին։ Առկա ուսուցման համակարգում հարցին պատասխանել է 223 ուսանող, որից 191-ը (90%) արդյունավետ է համարել կրթական ծրագրերի ղեկավարների աշխատանքը, իսկ հեռակա ուսուցման համակարգում հարցին պատասխանել է 57 ուսանող, որից 55-ը (97%) նույնպես համարել է արդյունավետ։

Հարցաշարի ֆակուլտետների, դեկանատների և մասնագիտական ամբիոնների կրթության կազմակերպման գնահատումն ունի հետևյալ պատկերը։

Դեկանատի աշխատակիցների վերաբերյալ գրանցված ցուցանիշով ամենաբարձրը առկա ուսուցման համակարգում ունի Տնտեսագիտության ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Բնական գիտությունների ֆակուլտետը։ Հեռակա ուսուցման համակարգում

ամենաբարձր ցուցանիշն ունի Բնական գիտությունների ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետը:





Ըստ ամբիոնների՝ առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Օտար լեզուների ամբիոնը, իսկ ամենացածրը՝ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնը: Հեռակա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնը, իսկ ամենացածրը՝ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնը:



Ֆակուլտետների ամփոփմամբ առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Տնտեսագիտության ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Բնական գիտությունների ֆակուլտետը: Հեռակա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Հումանիտար գիտությունների ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Տնտեսագիտության ֆակուլտետը:



Հարցաշարի հաջորդ գնահատումը, որը վերաբերում է դասախոսի գնահատմանը, արդյունքներն ուղարկվել են ֆակուլտետներ և մասնագիտական ամբիոններ՝ նիստերում քննարկելու համար։

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցումն ընդգրկում է նաև ուսանողների կողմից կարծիք- առաջարկություններ.

- դասախոսական աշխատանքի ընդունել ավելի բանիմաց երիտասարդ դասախոսների,
- միևնույն դասընթացի անընդմեջ դասախոսությունը ծանր է և հոգնեցնող,
- ավելացնել գործնական և սեմինար դասաժամերը,
- ունենալ լավ համակարգիչներ և լսարաններն ապահովել ժամանակակից սարքավորումներով (պրոյեկտորներ),
- հաշվի առնել ուսանողների հաճախելիությունը,
- պատմության մասնագիտության համար ապահովել քարտեզներ,
- ավելացնել մասնագիտական գրականությունը,
- ունենալ օբյեկտիվ գնահատում։